Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունիսի 4-ի N 680-Ն որոշման

«Հավելված
Բնակավայրերի տարածքների
զոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության,
հաստատման,
հաստատման և փոփոխման կարգի

Հավելված
22 Կոտայքի մարզի
Կապուտան համայնքի
ավագանու 2016
թվականի հունիսի 16-ի
N 23-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հնագույն պատմություն ունեցող Կոտայքի մարզում Կապուտանի համայնքը առանձնանում է հարուստ է պատմական արժեքավոր հուշարձաններով, միջնադարյան ճարտարապետության աչքի ընկնող կոթողներով: Համայնքի տարածքում պահպանվել են 2-1հազ. Ք.Ծ.Ա թվագրության ամրոցներ, դամբարանադաշտեր և բնակատեղիներ, միջնադարյան խաչքարեր, եկեղեցիներ, գերեզմանոցներ և տապանաքարեր::

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, որպես կանոն, մշակվում և հաստատվում է զոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

1.2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և (կամ) զոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

II. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

2.1. Հնագույն պատմություն ունեցող Կոտայքի մարզում Կապուտանի համայնքը առանձնանում է հարուստ է պատմական արժեքավոր հուշարձաններով, միջնադարյան ճարտարապետության աչքի ընկնող կոթողներով: Համայնքի տարածքում պահպանվել են 2-1հազ. Ք.Ծ.Ա թվագրության ամրոցներ, դամբարանադաշտեր և բնակատեղիներ, միջնադարյան խաչքարեր, եկեղեցիներ, գերեզմանոցներ և տապանաքարեր(հավելված 1)

III. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 Կապուտան գյուղում առկա է ակռմբի շենք, որը կառուցված է՝ 1947-1959 թ.թ., (ճարտ.՝Գ.Թամանյան)։ և ներառված է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում (հավելված 2)

IV. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍԿՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

Բոլոր շինարարական, վերակառուցման, վերականգնման և վերանորոգմանաշխատանքները պետք է կատարվեն միայն գործող ընթացակարգերով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերով:

Շենքերի ճակատների արտաքին հարդարանք: Շենքերի ճակատների (փողոցային և բակային) արտաքին հարդարանքի հետ կապված բոլոր շինարարական և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն միայն գործող ընթացակարգերով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերով:

Շինանյութ: Պատմաճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի շինությունների բնական քարերից կառուցված ճակատային պատերը ներկել կամ երեսապատել արգելվում է: Այլ շենքերի համար, նախընտրելի է օգտագործել սև, մոխրագույն, օխրա, սպիտակ գրանգների շինանյութեր, որոնք կներդաշնակեն բնակավայրի հիմնական կառուցապատմանը:

Նկուղներ և կիսանկուղներ: Բնակելի շենքերի նկուղային և կիսանկուղային հարկերը փողոցի կողմից մեկուսացված մուտքեր չպետք է ունենան:

Բոլոր շենքերի կիսանկուղների պատուհանների գոգերը մայթից պետք է առնվազն 30 սմ բարձր լինեն:

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

III կարգի ճանապարհի երկու կողմից պահպանել չկառուցապատվող կանաչապատ շերտ՝ 12 մ լայնությամբ, սանպահպանման և կողային տեսանելիությունն ապահովելու համար պարտադիր կանաչապատման պայմանով:Ավտոտնակների համար հատկացվող հողամասի նվազագույն մակերեսը 20 ք.մ., բացավտոկանգառատեղերի համար՝ 25 ք.մ.:Կանգառատեղերի համար խորացումները մայթի հաշվին իրականացնել միայն սիզամարգերի և առանձին ծառաթմբերի հաշվին՝ տեղական ինքնակառավարման մարմիններիհատուկ թույլտվությամբ, այլ հնարավորությունների բացակայության դեպքում մայթի մեջ գրպանաձև խորացմամբ ավտոկայանատեղերի կազմակերպման դեպքում ապահովել

- համահամայնքային նշանակության փողոցների մայթերի բանուկ մասի համար նվազագույնը 2.25-3.0 մ լայնություն,
- շրջանային նշանակության փողոցների մայթերի բանուկ մասի համար 1.5 մ լայնություն:

Խաչմերուկ մտնող փողոցների բեռնվածության մակարդակը 0.4-0.8 հասնելու դեպքում երթևեկությունը կարգավորել լուսակիրների միջոցով (տեղադրումը՝ գործող նորմերին համապատասխան):

Փողոցների երկայնական թեքություններն ընդունվում են կախված հաշվարկային արագություններից:

Տրանսպորտի միջոցների կանգառներ: Տրանսպորտի միջոցների կանգառները պետք է տեղավորվեն, որպես կանոն, միասնական նախագծով թեթև կոնստրուկցիաներից կառուցված, թափանցիկ պատերով կամ սյուներով շինությունների մեջ: Առավելագույն չափերը

- երկարությունը՝ 3.6 մ,
- լայնությունը՝ 2.0 մ:

Ճանապարհաշինական կառուցապատման կամ հուշարձանների վերականգնման ժամանակ անհրաժեշտ է ընդունել որոշումներ հաշմանդամների շահերի առավելագույն պահպանումով, ապահովելով վերջիններիս կենսագործունեության լիարժեք պայմաններ:
Ինչպես բնակելի թաղամասերը, այնպես էլ ճանապարհահատողական ցանցը պետք է նախատեսվեն զգաբնակչության վերոնշյալ խմբերի համար .երթուղիների ապահովմամբ հասարակական տրանսպորտից օգտվելու հարթակների, մոտեցումների ձևավորմամբ:
Հատուկ մասնագիտացված բնակելի կառույցները և մանկական հաստատություններից տեղադրվածությունը հրշեջ դեպոյից ընդունվում է 300 մ:
Հաշմանդամների համար հողատարածքների չափերը հաշվարկել համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-06 տների պահանջների:
Հետիոտն ուղիների նախատեսման ժամանակ հաշվի առնել հնարավորության դեպքում երկայնական ուղղությամբ 5 %-ից ոչ ավելի թեքությունների ապահովումը, խիստ ռելիեֆային պայմանների դեպքում մինչև 10% թեքությամբ, սակայն՝ ապահովելով հորիզոնական տեղամասեր 12 մ ընդմիջումներով:

3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

Կապուտան գյուղի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները.
- վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում, հստակ նախագծերին և ծրագրերին համապատասխան,ապահովելով հետագա ոռոգումը;
- ոռոգման համակարգի զարգացում և բարեփոխում;
- բոլոր տիպի հասարակական կառույցների տարածքների կանաչապատում և բարեկարգում;
- Կոշտ կենցաղային թափոններով աղտոտված տարածքների, խախտված լանդշաֆտով հողակտորների և սանիտարական գոտիների տարածքների մաքրում,վերականգնում, կանաչապատում:

Գյուղի կանաչապատման համակարգի ձևավորման համար առաջարկվում է օգտագործել գոյություն ունեցող կանաչապատ հատվածները և բնակավայրերի հողերի մեջ հաշվառված այլ, անօգտագործելի տարածքների մասերը, որոնց միջոցով կարելի է հասնել գյուղի միասնական կանաչապատման համակարգի ստեղծման: Ստեղծվող կանաչապատ համակարգի տարածքային զարգացման և պահպանման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները.
• կանաչապատ համակարգի պահպանման և կայուն զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում:
• համայնքապետարանին կից բարեկարգման և կանաչապատման գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում,
• բնակչության ներկայացուցիչների, մասնավորապես դպրոցականների և երիտասարդների մասնակցության ակտիվացում,
• կառուցապատման համար անբարենպաստ տարածությունների, հատկապես հեղեղատար վայրերի կառուցումից հետո ձորակների լանջերի կանաչապատման իրականացում և նպաստավոր հատվածներում բարեկարգված հարթակների ստեղծում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԿԱՊՈՒՏԱՆ գյուղ

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից մոտ 5-6 կմ ամ	Հ	1
	1.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.		Հ	1.1
2			ԱՄՐՈՑ	Ք.ա. 2 հազ.	գյուղից 2 կմ հս-ամ	Հ	2
	2.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ.	ամրոցի շրջակայքում	Հ	2.1
3			ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 3 կմ հվ	Հ	3
	3.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ.	ամրոցի շրջակայքում	Հ	3.1
4			ԱՄՐՈՑ	Ք.ա. 2 հազ.	գյուղից 4 կմ հս-ամ	Հ	4
5			ԱՄՐՈՑ	7-14 դդ.	գյուղից 5 կմ հս, «Ջրնգլներ» վայրում	Հ	6
6			ԱՄՐՈՑ «ԲԵՐԴԻ ԳԼՈՒԽ»	վաղ միջնադար	գյուղից 2 կմ աե	Հ	5
7			ԱՄՐՈՑ «ՍԵՎԱԲԵՐԴ»	10 դ.	գյուղից աե	Հ	7
8			ԲԱՑՕԹՅԱ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ «ԿԱՊՈՒՏԱՆ»	քարի դար	գյուղի հվ-ամ մասում, Հատիս լեռան հս-ամ լանջին	Հ	8: Ենթակայությամբ ներկայացված է 5 հուշարձան (8.1-8.5)
9			ԲՆԱԿԱՏԵՂԻ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ հս, գետակի հունի երկու կողմում	Հ	9

10		ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	7-16 դդ.	գյուղի հվ-ան մասում, «Կուլի ձոր» վայրում, Մ. Ներսիսյանի տան մոտ	Հ	11: Ենթակայությամբ ներկայացված է 6 հուշարձան (11.1-11.6)
11		ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	10-20 դդ.	գյուղի հս-ամ եզրին, բլրի վրա, Կապտավանքի շրջակայքում	Հ	Կապտավանքը և գերեզմանոցից մի հատված հանձնվել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին (21.1)
12		ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-18 դդ.	գյուղի ամ եզրին, ճանապարհի ձախ կողմում	Հ	10: Ենթակայությամբ ներկայացված է 9 հուշարձան (10.1-10.9)
13		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	ուշ միջնադար	գյուղից 1 կմ հս, «Դավախարաբա» վայրում	Տ	12
14		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	գյուղից 5 կմ հս, «Չընգլներ» վայրում	Տ	13
15		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	գյուղից 5 կմ հս	Տ	14
16		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	10-17 դդ.	գյուղից 1.5 կմ հս-ամ	Տ	15
17		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԾԱԿ ՔԱՐ»	17-20 դդ.	գյուղից 4 կմ հս	Տ	16
18		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 3-2 հազ.	գյուղից 1 կմ հվ-ամ	Հ	17
19		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից ամ, գյուղ մտնող ճանապարհից ձախ	Հ	18
20		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հս, «Գյարմաշոն» վայրում	Հ	19

21	ԴԱՍԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ հս, «Շընգլներ» վայրում	Հ	20
22	ԵԿԵՂԵՑԻ ԱԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ («ԿՈՒԼԻ ԺԱՄ»)	7 դ.	գյուղի մեջ, Ե. Գրիգորյանի տան բակում	Հ	22: Ենթակայությամբ ներկայացված է 2 հուշարձան (22.1-22.2)
23	ԽԱՉՔԱՐ	17-18 դդ.	գյուղի ան մասում, տան բակում	Հ	23
24	ԽԱՉՔԱՐ	17-18 դդ.	գյուղապետարանի դիմաց	Հ	24
25	ԽԱՉՔԱՐ	17-18 դդ.	գյուղապետարանի դիմաց	Հ	25
26	ԽԱՉՔԱՐ «ԿԱՊՈՒՅՏ ԽԱՉ»	12-13 դդ.	գյուղի հվ եզրին	Հ	26
27	ՀՈՒՇԱՐՁՅՈՒՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1967 թ.	գյուղի մեջ	Տ	27
28	ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1971 թ.	գյուղ մտնող ճանապարհի ձախ կողմում, բարձունքին	Տ	28
29	ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	քարի դար-միջնադար	գյուղից 2 կմ հս, «Ջաղի սելավ» վայրում	Հ	30
30	ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	քարի դար-միջնադար	գյուղից 2 կմ հս-ամ, «Խարաբեքի զաղա» վայրում	Հ	31
31	ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ՋՐԱՆՋԱՎ»	քարի դար-միջնադար	գյուղից 3 կմ հս-ան, «Մուլու զաղա» վայրում	Հ	32

Դամբարանադաշտ(Ք.Ա. 2-1 հզ.)

Թուխ Սանուկ

Եկեղեցի Կապտավանք 1349թ





Կից 5 թերթ 5 11, 3 ամսաթիվ